

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

1. Ընդհանուր կրթամաս

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՄԻ/մ-042 «Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում»			
Դասընթացին հասկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ծամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	
			Սեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	24
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգաք			
Դասընթացի նպատակը	Ուսանողներին տալ տեղեկատվական տեխնոլոգիաների մասին տեսական և գործնական գիտելիքներ, ինչպես նաև ձևավորել հմտություններ SS գործիքներով մասնագիտական ոլորտի տարաբնույթ խնդիրների լուծման համար:			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Գիտելիք</p> <ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը մասնագիտական ոլորտում <p>Հմտություն</p> <ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական տեխնոլոգիաների ապարատային և ծրագրային միջոցների կիրառությունը մասնագիտական բնույթի ուսումնասիրությունների կատարման և արդյունքների վերլուծության համար <p>Կարողունակություն</p> <ul style="list-style-type: none"> • Տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառումը մասնագիտական ցանկացած ոլորտի աշխատանքներում 			
Դասընթացի բովանդակությունը	<p>Թեմա 1. Տեղեկույթ և նրա հատկությունները, տեղեկույթի ներկայացման, կողմորում, մշակման, պահպանում և փոխանցում: Տեղեկատվական հասարակություն: Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ծրագրային և տեխնիկական ապահովման ընդհանուր բնութագիրը:</p> <p>Թեմա 2. Տեղեկատվական համակարգերի բնութագրումն ու կառուցվածքը, տեսակները, ֆունկցիոնալ ենթահամակարգերը:</p> <p>Թեմա 3. Մասնագիտական բնույթի հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների վերլուծություն MS Office ծրագրային փաթեթի միջավայրում:</p> <p>Թեմա 4. Աշխատանք Matlab մասնագիտական ծրագրային փաթեթի հետ</p>			

	<p>Թեմա 5: Հեռահաղորդակցական տեղեկատվական տեխնոլոգիաներ: Տեղեկատվական համակարգերում ինֆորմացիայի պաշտպանումը:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p><i>Տեսական գիտելիքների գնահատման չափանիշները.</i></p> <ul style="list-style-type: none"> ✦ տեսական նյութի իմացություն՝ վերարտադրման մակարդակով, ✦ առաջադրված հարցերի պատասխանի բովանդակություն, ներկայացման տրամաբանական հաջորդականություն, ամբողջություն, ճշտություն, սեփական տեսակետի հիմնավորման աստիճան, ✦ տեսական նյութի յուրացման աստիճան՝ վարժությունների, գործնական խնդիրների լուծման համար կիրառման տեսանկյունից: <p><i>Լաբորատոր աշխատանքների գնահատման չափանիշները (4 ստուգում, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 40 միավոր).</i></p> <ul style="list-style-type: none"> ✦ հանձնարարության կատարում և կատարման որակ, ✦ մասնակցություն լսարանային քննարկումներին, ✦ խնդիրների լուծման կոռեկտ և արդյունավետ ալգորիթմների մշակում, ալգորիթմի ընտրության հիմնավորում, ✦ կազմված ծրագրերի շարահյուսական և իմաստաբանական կոռեկտություն: <p><i>Ինքնուրույն աշխատանքի գնահատման չափանիշները (2 ինքնուրույն աշխատանք, յուրաքանչյուրը գնահարվում է առավելագույնը 10 միավոր՝ գումարային առավելագույնը 20 միավոր).</i></p> <ul style="list-style-type: none"> ✦ անհատական աշխատանքի առաջին տեսակի՝ ռեֆերատի, ներկայացում էլեկտրոնայաին տեսքով, <ul style="list-style-type: none"> ռեֆերատում ներկայացված նյութի համապատասխանություն առաջա-դրված թեմայի հետ, ռեֆերատի ձևակերպման որակ (գրագիտության ընդհանուր մակարդակ, շարադրման ոճ, լուսաբանումների որակ, տեղեկատվական:
<p>Գրականություն</p>	<p>Շ.Դ.Համբարձումյան, Ինֆորմացիոն համակարգեր և տեխնոլոգիաներ, Երևան, 2003 Մ. Է. Կոսեմյան, Ա. Ժ. Սմբատյան, Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Երևան, 2013 Տ. Հարությունյան, Ռադիոֆիզիկայի խնդիրների համակարգչային մոդելավորումը matlab միջավայրում, Երեվան, ԵՊՀ հրատարակչություն, 2016</p>

<p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p>	<p>ԷԻԿ/մ-040 - Կրթության բնագավառի օրենսդրություն</p>
<p>Դասընթացին հատկացվող կրեդիտը</p>	<p>2 կրեդիտ</p>

Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	12
			Մեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	<p>Տալ համապատասխան գիտելիքներ, ձևաորել ու զարգացնել հմտություններ և կարողություններ կրթության իրավունքի և օրենսդրության տեսականմեթոդական ժամանակակից խնդիրների, կրթության քաղաքականության և ռազմավարության իրականացման վերաբերյալ, ինչը կնպաստի ընդհանուր կրթական համակարգի և հատկապես հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների արդյունավետ կառավարմանը, կշաղկապի վերջին երկու օղակները:</p> <p>Առանձին լուսաբանվում են նաև անցումային հասարակարգերի կրթական համակարգի խնդիրները և դրանց լուծման ռազմավարությունն ու այդ համատեքստում՝ ՀՀ կրթական օրենսդրության բարեփոխումների արդյունավետությունը:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> • Կրթական իրավունքի և օրենսդրության իրականացման ռազմավարության վերաբերյալ, • Ուսումնական հաստատությունների կառավարման օրենսդրության վերաբերյալ, • Ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերի, դրանց նմանությունների ու տարբերությունների վերաբերյալ <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Վերհանել ու վերլուծել հանրակրթական հաստատությունների կառավարման ժամանակակից մոտեցումները: • Դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները կիրառել ուսումնական հաստատության հետագա կառավարման ու ղեկավարման գործընթացում: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Գործնականում կիրառել ուսումնական գործընթացի կառավարման արդի սկզբունքները • Հանրակրթության գործընթացի կարիքները բացահայտելու 			

	<p>համար իրացնել ձեռք բերած գիտելիքները</p> <ul style="list-style-type: none"> • Կազմակերպել ուսումնական հաստատության գործունեության վերահսկողություն
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Դասընթացի առարկան, մեթոդներն ու գործառնությունները: Կրթության իրավունքի աղբյուրները Թեմա 2. Կրթաիրավական հարաբերություններ, սուբյեկտները Թեմա 3. Հանրակրթության կառավարման գործընթացի մասնակիցները Թեմա 4. Հանրակրթության կառավարման մարմինները և դրանց իրավասությունները Թեմա 5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության իրավունքը Թեմա 6. Կրթական մասնակիցների աշխատանքային հարաբերությունները</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> ▪ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր, ▪ ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր, ▪ դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր, ▪ ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր- Կրթական իրավունք, Եսայան Ա., Երևան, 2011 Աշխատանքի և կրթության իրավունք, Դիլոյան Ա., Երևան, 2002 Կրթությունը Հայաստանում, Հարությունյան Կ., Դավթյան Ն., Երևան, 2008 Հայաստանի կառավարություն, ՅՈՒՆԻՍԵՖ, Երևան, 2002 Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2014 Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2016 Լրացուցիչ- Միջնակարգ կրթությունը Հայաստանում, խնդիրներ և հեռանկարներ, Երևան, 2014 Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Երևան, 2017: Կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 1999թ. ապրիլի 14-ին), Երևան, 1999:</p>

	<p>Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին), Երևան, 2005:</p> <p>Հանրակրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2009թ. հուլիսի 10-ին), Երևան, 2009:</p> <p>Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. մայիսի 25-ին), Երևան, 2005:</p> <p>Կրթության պետական տեսչության մասին ՀՀ օրենք (ընդունված է 2005թ. նոյեմբերի 15-ին), Երևան, 2005:</p>
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-044 «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏԱԶՍՓՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ (գրականագիտություն)» /կամընտրական դասընթաց/			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	12
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը, խնդիրները	<p>Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել</p> <p>համակարգային պատկերացում գիտության և գիտաչափության հարցերի մասին:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <p>-Ներկայացնել գիտության ոլորտի հիմնական հասկացությունները:</p> <p>-ծանոթացնել իտական աշխարհի արդի մարտահրավերներին: :</p> <p>-ուսումնասիրել գիտաչափության մեթոդները:</p> <p>-տարբերակել գիտաչափության տարբեր մոդելները:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է.</p> <p>Հասկանա՝</p> <ul style="list-style-type: none"> • Գիտական աշխատանքի նշանակությունը: • Ուսումնասիրվող օբյեկտի և առարկայի 			

	<p>պատմությունը:</p> <ul style="list-style-type: none"> • Գիտաչափության նշանակությունը: <p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> • Գիտության ոլորտի հիմնական հասկացությունները, կարգերը: • Գիտաչափության հիմնական տեսակները և շտեմարանները: <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • տարբերակել գիտական աշխատանքը այլ բնույթի տեղեկատվական արտադրանքից, • կատարել գիտաչափական վերլուծություններ: <p>Տիրապետի՝</p> <ul style="list-style-type: none"> • գիտական աշխատանքի ստեղծման մեթոդներին: • գիտաչափության մեթոդներին: : <p>Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները.</p> <p>ԳԿ1. Վերլուծելու և համադրելու ունակություն.</p> <p>ՀԳԿ1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:</p> <p>ԱԿ6. Կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:</p>
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Գիտության լեզուն Թեմա 2. Գիտությունը մշակույթի համակարգում Թեմա 3. Գիտաչափական շտեմարաններ Թեմա 4. Գիտության և տեխնոլոգիայի քարտեզագրում</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1. Փաստերի կիրառման հմտություն 2. Աշխատանքի կառուցվածք 3. Օգտագործվող մեթոդներ 4. Ամբողջականություն 5. Մտքի ձևակերպում
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր գրականություն (ՊԳ)</p> <ol style="list-style-type: none"> 1. Даниленко В.П. Введение в науковедение : учебник / Даниленко В.П.. — Саратов : Ай Пи Эр Медиа, 2018.

	<p>2. М. А. Акоев, В. А. Маркусова, О. В. Москалева, В. В. Писляков. Руководство по наукометрии: индикаторы развития науки и технологии. Екатеринбург : Изд-во Урал. ун-та, 2014. – 250 с.</p> <p>Լրացուցիչ գրականություն(ԼԳ)</p> <p>1. Гонашвили А.С. Наукометрические базы данных и работа с ними: научно-методическое пособие / А.С. Гонашвили. – СПб.: Университет при МПА ЕврАзЭС, 2020.</p>
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-043 «Գրականագիտության միջգիտակարգային շերտերը» /կամընտրական դասընթաց/			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	12
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը, խնդիրները	<p>Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգային պատկերացում գրականագիտության միջգիտակարգային շերտերի մասին:</p> <p>Դասընթացի խնդիրներն են`</p> <ul style="list-style-type: none"> -Ներկայացնել գրականագիտության ոլորտի հիմնական հասկացությունները: -Ցանկացնել գրականագիտության արդի ուղղություններին: -ուսումնասիրել գրականագիտական հանդեսների գիտաչափության մեթոդները: 			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է.</p> <p>Հասկանա`</p> <ul style="list-style-type: none"> • Գրականագիտության հիմնական հասկացությունները: • Գիտաչափության նշանակությունը: 			

	<p>Իմանա՝</p> <ul style="list-style-type: none"> • Գրականագիտության և այլ գիտակարգերի փոխառնչությունները: <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • կատարել միջգիտակարգային վերլուծություններ: <p>Տիրապետի՝</p> <ul style="list-style-type: none"> • գիտական աշխատանքի ստեղծման մեթոդներին: <p>Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը պետք է ձեռք բերի հետևյալ կոմպետենցիաները.</p> <p>ԳԿ1. Վերլուծելու և համադրելու ունակություն.</p> <p>ՀԳԿ1. Գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն:</p> <p>ԱԿ6. Կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները:</p>
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Գրականագիտության արդի հիմնախնդիրներ Թեմա 2. Գրականությունը արվեստի համակարգում Թեմա 3. Գրականությունը և հասարակագիտությունը Թեմա 4. Գրականագիտական հանդեսներ</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 6. Փաստերի կիրառման հմտություն 7. Աշխատանքի կառուցվածք 8. Օգտագործվող մեթոդներ 9. Ամբողջականություն 10. Մտքի ձևակերպում
<p>Գրականություն</p>	<p>Պարտադիր գրականություն (ՊԳ)</p> <ol style="list-style-type: none"> 1. Тодд III Уильям М.: Социология литературы. Институты, идеология, нарратив 2. Ефимов, Н. И.. Социология литературы [Текст] : очерки по теории историко-литературного процесса и по историко-литературной методологии <p>/Լրացուցիչ գրականություն(ԼԳ)</p> <ol style="list-style-type: none"> 1. Роберт Дарнтон: Литературный Тур де Франс. Мир книг накануне Французской революции 2. Пол Джайлз: Глобальный пересмотр карты американской литературы

2. Մասնագիտական կրթամաս

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-045 «ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	48	Դասախոսություն	24
			Գործնական	24
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	2 ընթացիկ գրավոր քննություն			
Դասընթացի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Միջին հայերենի զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին: • Դասընթացի շրջանակներում միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում ուսանողների կողմից: • Միջինհայերենյան տեքստերը վերլուծելու, քերականական առանձնահատկությունները վերհանելու կարողությունների ձևավորում ուսանողների մոտ: 			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Իմանա</p> <p>Միջին հայերենի քերականական մի շարք համակարգերի պատմական զարգացման նախադրյալները:</p> <p>Կարողանա</p> <p>Ընթերցել, վերլուծել մեկնաբանել միջին հայերենով գրված մատենագրությունը:</p> <p>Տիրապետի</p> <p>Միջին հայերենի հնչյունաբանության, բառագիտության և քերականության հիմնական հասկացություններին, հայոց լեզվի զարգացման պատմության պարբերացմանը, այդ մասին եղած կարծիքների քննադատական վերլուծությանը, ծանոթ լինի միջին հայերենի հնչյունական, բառագիտական և քերականական կարևորագույն առանձնահատկություններին:</p>			

<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Գրական միջին հայերենը որպես գրական հայերենի առանձին ենթաշրջան: Միջին հայերենի պարբերացումը: Միջինհայերենյան սկզբնաղբյուրները:</p> <p>Թեմա 2. Միջին հայերենի հնչյունական համակարգը:</p> <p>Թեմա 3. Միջին հայերենի բառային կազմը:</p> <p>Թեմա 4. Միջինհայերենիանվանականհոլովմանհամակարգը: Հոլովմանքերականականկարգը:</p> <p>Թեմա 5. Միջինհայերենիհոլովի, թվիևառկայացմանքերականականկարգերը:</p> <p>Թեմա 6. Միջին հայերենի հոլովման համակարգի պատմական զարգացումը:</p> <p>Թեմա 7. Ածականը և թվականը միջին հայերենում:</p> <p>Թեմա 8. Միջին հայերենի դերանվանական հոլովման համակարգը:</p> <p>Թեմա 9. Միջին հայերենի անդեմ բայերի համակարգը:</p> <p>Թեմա 10. Միջին հայերենի խոնարհման համակարգը: Դրական և ժխտական խոնարհումներ: Համադրական, վերլուծական և կրկնաբաղադրյալ ժամանակաձևեր: Անկանոն և պակասավոր բայեր: Միջին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացումը:</p> <p>Թեմա 11. Շարահյուսական կապակցությունների բաղադրիչների կապակցման եղանակներն ու միջոցները միջին հայերենում:</p> <p>Թեմա 12. Միջին հայերենի պարզ նախադասության ընդհանուր բնութագիրը (երկկազմ և միակազմ նախադասություններ):</p> <p>Թեմա 13. Միջին հայերենի բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգաքննների միջոցով: Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ: Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:</p>

Գրականություն	<p><i>Պարտադիր գրականություն</i></p> <p>Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 1-ին մաս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Ա., Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության, հ. Բ., Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի</p> <p><i>Լրացուցիչ գրականություն</i></p> <p>Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների Ռ. Իշխանյան, Նոր գր. հայերենը 17-18-րդ դդ. Գր. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն Գ. Խաչատրյան, Գրաբար</p>
----------------------	---

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-038 «Պատմական ոճաբանություն»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	48	Դասախոսություն	24
			Գործնական աշխատանք	24
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Ընթացիկ քննություն			
Դասընթացի նպատակը	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ժամանակակից ոճաբանության հիմնական հասկացություններին, ոճի տեսակներին, հնչյունային ոճական հնարներին, բառային, ձևաբանական, շարահյուսական ոճաբանություններին, բանադարձումներին, տեքստի ոճաբանությանը, որոնց իմաստավորումը կօգնի ուսանողների մեջ սեմինարների, գործնական և ինքնուրույն աշխատանքների միջոցով ձևավորել համապատասխան կարողություններ և հմտություններ:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> Կիմանա հնչյունային, բառային, քերականական ոճագիտության տեսական հիմունքները, տեքստի ոճաբանության արդի տեսությունների ուսումնասիրման մեթոդական հիմքերը և արդյունքները 			

	<p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Կլարոդանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում, տիրապետի պատմահամեմատական հետազոտության մեթոդներին <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> • Կլարոդանա տիրապետել հայ և օտարազգի չափանիշների համապատասխանությունը, հայոց լեզվի տարբեր շրջաններին վերաբերող լեզվական նյութի շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p><i>Թեմա 1 Ոճաբանության հիմնական հասկացությունները:</i> Ոճ, արտահայտչական հնար, պատկերավորման միջոց, ոճական համատեքստ:</p> <p><i>Թեմա 2 Գաղափար ոճի մասին: Ոճի տեսակները:</i> Հրապարակախոսական, գիտական, պաշտոնական-վարչական, գեղարվեստական, խոսակցական, իրադրային և անհատական:</p> <p><i>Թեմա 3 Հնչունային ոճական հնարներ: Բառային ոճաբանություն:</i> Առձայնույթ, բաղաձայնույթ, նմանաձայնություն. Բառագիտական ոճաբանություն, իմաստաբանական ոճաբանություն, դարձույթներ, բանադարձումներ:</p> <p><i>Թեմա 4 Ձևաբանական ոճաբանություն: Շարահյուսական ոճաբանություն:</i> Գոյականի թվի, դեմքի, հոլովի, առման, բայի քերականական հատկանիշների ոճական գործառույթներ:</p> <p><i>Թեմա 5 Շարահյուսական փոխաբերություններ:</i></p> <p><i>Թեմա 6 Վերաիմաստավորում:</i> Շարահյուսական փոխաբերություններ: Թերի և լրիվ, միակազմ և երկկազմ, հնչերանգով տարբերվող նախադասությունների վերաիմաստավորումները: Ժխտական նախադասությունների փոխաբերական կիրառությունը:</p> <p><i>Թեմա 7 Շարահյուսական բանադարձումներ:</i> Կրկնություն, նրա տեսակներն ու ոճական գործառույթները: Ոճական հակադրություններ:</p> <p><i>Թեմա 8 Մասնատված նախադասություններ:</i> Մասնատումը բարդ նախադասության կազմում սովորական և անսովոր դրսևորումներով:</p> <p><i>Թեմա 9 Տեքստի ոճաբանություն:</i> Տեքստի լեզվաբանություն և տեքստ:</p> <p><i>Թեմա 10 Տեքստային ոճական հնարներ:</i> Առաջաբան, բուն տեքստ, վերջաբան. Թեզիսային, տեղեկատվական, պրագմատիկական, սկզբունքային, հանրագիտարանային:</p>

<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ընթացքում կատարված հարցումների, ինքնուրույն աշխատանքների և ստուգարքների միջոցով: ▪ Գործնական աշխատանքները՝ չորս ընթացիկ ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ: ▪ Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
<p>Գրականություն</p>	<p>Գ. Բ. Ջահուկյան, Ֆ.Ն.Խլղաթյան, Հայոց լեզու, Եր., 1994</p> <p>Գ. Բ. Ջահուկյան, Ֆ. Ն. Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 1998</p> <p>Գ. Օ. Վահանյան, Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Եր., 1956</p> <p>Ս. Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984</p> <p>Ս. Ա. Մարության, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000</p> <p>Լ. Կ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003</p> <p>Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989</p> <p>Ս. Ա. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984</p> <p>Ռ. Խ. Մկրտչյան, Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Ե., 1963</p> <p>Թ. Ս. Շահվերդյան, Հաստատական և ժխտական նախադասությունների վերաբերյալ դասական գրաբարում, Գիտական աշխատություններ, 8, Գյումրի, 2005</p> <p>Թ. Ս. Շահվերդյան, Պարզ նախադասության կազմության ոճական վերլուծությունը գրաբարում, Լեզու և լեզվաբանություն, Ե., 2005</p> <p>Թ. Ս. Շահվերդյան, Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Ե., 2007</p> <p>Թ. Ս. Շահվերդյան, Ոճագիտություն, Ե., 2010</p>

<p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p>	<p>ՀԼԳ/մ-036 «ԱՆԿԱՆՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ»</p>		
<p>Դասընթացին հատկացվող կրեդիտը</p>	<p>3 կրեդիտ</p>		
<p>Ուսումնառության տարի / կիսամյակ</p>	<p>1-ին տարի, 1-ին կիսամյակ</p>		
<p>Ժամերի բաշխումը</p>	<p>Լսարանային</p>	<p>36</p>	<p>Դասախոսություն</p> <p>20</p>
	<p>Ինքնուրույն</p>	<p>54</p>	<p>Գործնական աշխատանք</p> <p>16</p>
	<p>Ընդամենը</p>	<p>90</p>	
<p>Ստուգման ձևը</p>	<p>Ստուգարք</p>		
<p>Դասընթացի նպատակը</p>	<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ժամանակակից հայերենում նկատվող անկանոնությունները, դրանց առանձնահատկությունները և դերը ժամանակակից հայոց լեզվի զարգացման գործընթացում:</p>		
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p>		

	<ol style="list-style-type: none"> 1. Իմանա ժամանակակից հայոց լեզվում նկատելի անկանոնությունների ընդհանուր բնութագիրը և տարածվածության մակարդակն ու ոլորտը: 2. Կարողանա անկանոնությունների վերաբերյալ եղած վիճելի հարցերի շուրջ գոյություն ունեցող մոտեցումների հիման վրա ձևավորել անձնական տեսակետ: 3. Տիրապետի համադրական, կառուցվածքային վերլուծությունների մեթոդներին:
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p><i>Թեմա 1.</i> Ձևային վերլուծության հարցեր. ձևայինների պարզեցում:</p> <p><i>Թեմա 2.</i> Հոդակապի հարցը հայերենում (ա և ե): Միջաձանցներ և միջաձանցում: Հապավումներ և անհոդակապ բարդություններ. (տարբերակման հիմունքները):</p> <p><i>Թեմա 3.</i> Հոլովների հարցը հայերենում: Հոլովման տիպերը: Իմաստային և ձևային հոլովումների հարցը: Շնչավոր և անշունչ գոյականների քերականական տարբերակման հիմունքները:</p> <p><i>Թեմա 4.</i> Թվի քերականական կարգը. անեզակական, անհոգնական գոյականներ: Որակական և հարաբերական ածականների տարբերակման հիմունքները: Թվականների տեսակների հարցը լեզվաբանության մեջ: Դերանուններ. հարցական և հարաբերական, որոշյալ և ժխտական:</p> <p><i>Թեմա 5.</i> Բայի սեռի քերականական կարգը (3, 4 թե՞ 6 սեռ):</p> <p><i>Թեմա 6.</i> Կերպի քերականական կարգը հայերենում. վիճելի հարցեր:</p> <p><i>Թեմա 7.</i> Անորոշ դերբայը և նրա շարահյուսական գործառնությունների խնդիրը: Եղանակի քերականական կարգը. հարկադրական եղանակի ճանաչման և ենթադրական եղանակի գնահատման հարցը:</p> <p><i>Թեմա 8.</i> Անկանոն և պակասավոր բայերի գնահատման հարցը:</p> <p><i>Թեմա 9.</i> Ժխտական խոնարհումը ժամանակակից հայերենում:</p> <p><i>Թեմա 10.</i> Նկարագրական մակբայներ և շարահյուսական կապակցություն: Անիսկական կապեր և կապական բառեր:</p> <p><i>Թեմա 11.</i> Մի շարք շաղկապների իմաստային դասակարգման հարցեր:</p> <p><i>Թեմա 12.</i> Բառակապակցության ճանաչման հարցը լեզվաբանության մեջ:</p> <p><i>Թեմա 13.</i> Բաղադրյալ ստորոգյալ:</p> <p><i>Թեմա 14.</i> Գոյականական անդամի լրացումներ: Բայական անդամի լրացումներ:</p>

	<i>Թեմա 15. Բարդ նախադասության բազմամակարդակ վերլուծություն (գործնական):</i>
Գնահատման մեթոդները և չափանիշները	<ul style="list-style-type: none"> ▪ Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ քննության ժամանակ: ▪ Գործնական աշխատանքները՝ նվազագույնը 2 հարցում՝ 20-ական միավոր գնահատմամբ: ▪ Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
Գրականություն	<p><i>Պարտադիր՝</i></p> <p>Մ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական և քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում</p> <p>Մ. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում</p> <p>Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը</p> <p>Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Բ, Գ</p> <p>Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքները</p> <p>Ա. Սանթրոյան, Արդի հայերենի անկանոն և պակասավոր բայերի կազմության և բայահիմքերի շուրջ: / Գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, թեզիս/</p> <p>Ա. Սանթրոյան, Ձևային վերլուծության մի քանի խնդիրներ: / Тезисы IX Международной конференции по армянскому языкознанию, Санкт – Петербург, стр. 181-184 (сборник тезисов)./</p> <p>Ա. Սանթրոյան, Զրո. գոյակա՞ն, թե՞ անկանոն թվական: / Ջահուկյանական ընթերցումներ, հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, (Երևան, 2013, հունիսի 22-24), էջ 127-135:/</p> <p>Ա. Սանթրոյան, Ուղղակի մեջբերվող խոսքով կապակցության տեղը նախադասության համակարգում / Միջազգային գիտաժողով՝ նվիրված ՎՊՀ-ի հիմնադրման 50-ամյակին և Հ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2019/</p>

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-035 «Հայոց լեզվի տեսության մեթոդաբանական հիմքերը»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	3 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	36	Դասախոսություն	20
			Մեմինար	
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	16
	Ինքնուրույն	54		
Ընդամենը	90			

Ստուգման ձևը	Ստուգարք
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է համակարգել նախորդ կուրսերում ձեռք բերած գիտելիքները և այդ ամենը ներկայացնել լեզվաբանական գիտության լույսի տակ՝ հաշվի առնելով ինչպես այդ բնագավառի նախորդ շրջանի նվաճումները, հեղինակային տեսությունները, այնպես էլ նորագույն ձեռքբերումները: Այս դասընթացի շրջանակներում անդրադարձ կլինի նախորդ տարիներին չուսաբանված հարցերին, կբացահայտվեն և կմեկնաբանվեն վիճելի հարցեր և դրույթներ, հայերենի կառուցվածքային համակարգի պատմական զարգացմամբ պայմանավորված լեզվական երևույթներ:
Դասընթացի վերջնարդյունքները	<p><u>Առարկայի ուսուցման վերջնարդյունքը</u></p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է գիտենա՝</u> Հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, ծագումնաբանական և տիպաբանական առանձնահատկությունները, համակարգերի և հակահամակարգերի հարաբերակցությունը:</p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.</u> Բնութագրել լեզվի կառուցվածքային միավորները համակարգում և շարակարգում, հայերենի և օտար լեզուների զուգադրությամբ բացահայտել քերականական իմաստների արտահայտման ընդհանրություններն ու տարբերությունները՝ համեմատության ելակետը և նպատակը հայերենի լեզվական փաստերը դարձնելով:</p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.</u> Լեզվաբանական հետազոտության մեթոդներին ու նրանց եղանակներին, դրանց գործադրումով հետազոտական աշխատանքներ (ավարտաճառ, մագիստրական թեզ, հոդված և այլն) կատարելու հմտություններին:</p>
Դասընթացի բովանդակությունը	<p>Թեմա 1 Հայոց լեզվի տեսության քննության առարկան: Հայերենի հնչյունական համակարգը. նրա առանձնահատկությունները: Հնչյունափոխություն. հնչյունաշղթա:</p> <p>Թեմա 2 Բառագիտություն. նկարագրական և պատմական բառագիտություն: Հայերենի բառակազմության օրինաչափությունները: Բառակազմություն և ձևաբանություն</p> <p>Թեմա 3 Բառիմաստ և բառի ձև. ձևի և իմաստի փոխհարաբերության հարցերը:</p> <p>Թեմա 4 Քերականություն. ձևաբանություն. խոսքի մասի ըմբռնումը հայ քերականագիտության մեջ:</p> <p>Թեմա 5 Անուն խոսքի մասեր: Ժամանակակից հայերենի քերականական կարգերը. անվանական քերականական կարգեր:</p> <p>Թեմա 6 Հատկանշային իմաստ արտահայտող խոսքի մասեր: Բայաձևերի հարացույց. խոնարհում: Բայական քերականական կարգեր:</p> <p>Թեմա 7 Շարահյուսություն. շարահյուսական մակարդակի միավորներ և նախադասության անդամներ:</p> <p>Թեմա 8 Բարդ նախադասության կառուցվածքը և տիպերը:</p>
Գնահատման մեթոդները և չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական աշխատանքների, ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների միջոցով: • Գործնական աշխատանքներ՝ նվազագույնը երկու ստուգում՝

	<p>20-ական միավոր գնահատմամբ:</p> <ul style="list-style-type: none"> • Ինքնուրույն աշխատանք՝ երկու ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ
Գրականություն	<p><i>Պարտադիր գրականություն</i> Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները <i>Լրացուցիչ գրականություն</i> Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, հ.1 Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր Աբրահամյան Ս., Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն, հ.1, 2 Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները</p>

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-046 «ԵՐԳԻԾԱՆՔԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	3 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	1-ին տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	36	Դասախոսություն	20
			Գործնական աշխատանք	16
	Ինքնուրույն	54		
	Ընդամենը	90		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին մոտ խորացնել հայ գրականության պատմության տարբեր շրջափուլերում ուսումնասիրած երգիծաբանների ստեղծագործության վերաբերյալ, ինչպես նաև ուսումնասիրել հայ գրողների ստեղծագործություններում դրսևրոված երգիծանքը: Դասընթացը կոչված է սովորողների մեջ գիտելիքների համակարգ ձևավորելու երգիծանքի տեսության մասին, զուգահեռներ անելու համաշխարհային երգիծաբանության ավանդների հետ:</p>			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>«Երգիծանքը հայ գրականության մեջ» դասընթացն ուսումնասիրելուց հետո սովորողները պետք է իմանան</p> <ul style="list-style-type: none"> • երգիծանքի պատմությունն ու տեսությունը. • հայ երգիծաբանների գործերը. • գրողների երկերում առանձին երգիծական տարրերի առանձնահատկությունները. • երգիծանքի տեսության մեջ առկա վիճելի հարցերը: 			

	<p>Կարողանան՝</p> <ul style="list-style-type: none"> • բացահայտել հայ երգիծական գրականության զարգացման դոմինանտ կողմերը. • մասնավոր ուսումնասիրություններ անել համաշխարհային երգիծաբանության ոլորտում. • կատարել համեմատական դիտարկումներ. • առանձին հեղինակների ստեղծագործությունն արժևորել գրական գործընթացի մեջ: <p>Տիրապետեն՝</p> <ul style="list-style-type: none"> • երգիծաբանության վերլուծության առանձնահատկություններին. • երգիծանքի տեսակների տարբերակման մեթոդներին. • հանձնարարված գրական տեքստերի վերարտադրությանը:
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p><i>Թեմա 1</i> Երգիծանքը հայ հին գրականության մեջ <i>Թեմա 2</i> Երգիծանքը հայ միջնադարյան գրականության մեջ <i>Թեմա 3</i> Երգիծանքը Սասնա ծռեր էպոսում <i>Թեմա 4</i> Երգիծանքը հայ նոր գրականության մեջ <i>Թեմա 5</i> Երգիծանքը հայ նորագույն գրականության մեջ <i>Թեմա 6</i> Երգիծական ժանրեր <i>Թեմա 7</i> Երգիծանքի տեսակներ <i>Թեմա 8</i> Երգիծանքի տեսություն</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Գործնական աշխատանքները՝ 4 ստուգում՝ 10-ական միավորով: • Ինքնուրույն աշխատանքը՝ 2 աշխատանք՝ 10-ական միավորով:
<p>Գրականություն</p>	<ol style="list-style-type: none"> 1. Վանո Եղիազարյան, Հայ հին գրականության պատմություն 2. Սասունցի Դավիթ 3. Ալբերտ Մակարյան, Անի Շահնազարյան, Երգիծանքը հայ միջնադարյան գրականության մեջ /հայ և եվրոպական միջնադարյան երգիծանքի համեմատական քննություն/, Վեմ համահայկական հանդես, թիվ 1 4. Ալբերտ Մակարյան, Հակոբ Պարոնյանի «Ազգային ջոջերը» 5. Ալբերտ Մակարյան, Արևմտահայ գրական դիմանկարը 6. Սերգեյ Սարինյան, Պարոնյանի ծիծաղի փիլիսոփայությունը, տես Հայոց գրականության երկու դարը, հ. 3, էջ 197-212: 7. Անուշավան Մակարյան, Երգիծական հրատարակություն

<p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p>	<p>ՀԼԳ/մ-023 «ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»</p>
<p>Դասընթացին հատկացվող կրեդիտը</p>	<p>4 կրեդիտ</p>

Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 1-ին կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	48	Դասախոսություն	24
			Գործնական աշխատանք	24
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Ընթացիկ քննություն			
Դասընթացի նպատակը	Ուսանողներին ծանոթացնել արդի հայ գրականության զարգացման առանձնահատկություններին և օրինաչափություններին՝ խորացնելով և ընդլայնելով գիտելիքները հայ գրականության պատմությունից և գրականության տեսությունից:			
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> Իմանա արդի հայ գրականության զարգացման գլխավոր առանձնահատկությունները և օրինաչափությունները: <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> Կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում, ուսումնասիրվող նյութի շրջանակներում ունենա ձևավորված տեսական և քննադատական հայացք, <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> Կարողանա ուսումնասիրվող նյութի շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ: 			
Դասընթացի բովանդակությունը	<p><i>Թեմա 1.</i> Ներածություն: Վեպի և վիպակի զարգացման առանձնահատկությունները. Ռ. Հովսեփյան, Վ. Մուղնեցյան, Վ. Գրիգորյան:</p> <p><i>Թեմա 2.</i> Գ. Խանջյանի վեպը: Հովհ. Երանյանի դրամատուրգիական փորձառությունը:</p> <p><i>Թեմա 3.</i> Բանաստեղծության զարգացման միտումները. Հր. Սարուխան, Հովհ. Գրիգորյան, Արմեն Մարտիրոսյան, Սոնա Վան, Մանվել Միկոյան:</p> <p><i>Թեմա 4.</i> Արդի սփյուռքահայ գրականության զարգացման միտումները. պոլսահայ գրականությունը:</p> <p><i>Թեմա 5.</i> Պատմվածքը և զարգացման միտումները արդի հայ արձակուրդում. Լ. Խեչոյանի պատմվածքը:</p> <p><i>Թեմա 6.</i> Սուսաննա Հարությունյանի, Նելլի Ծահնագարյանի, Արամ Պաչյանի պատմվածքը:</p> <p><i>Թեմա 7.</i> Հովհաննես Երանյանի պատմվածքը. «Մարդահամար», «Ապոկալիպսիսի հրեշտակները» ժողովածուները:</p> <p><i>Թեմա 8.</i> Հրաչյա Սարիբեկյան, Նարինե Կոռյան, այլք:</p> <p><i>Թեմա 9.</i> Դրամատուրգիայի զարգացման առանձնահատկությունները. Կարինե Խողիկյանի, Նելլի Շահնագարյանի, Ս. Խալաթյանի, Գ. Խանջյանի դրամատուրգիան:</p>			
Գնահատման մեթոդները և	Բանավոր հարցում, ինքնուրույն աշխատանքի ստուգում:			

<p>չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր հարցման, ինքնուրույն աշխատանքի, գրավոր աշխատանքների միջոցով և ընթացիկ քննության ժամանակ: • Գործնական աշխատանքները՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ: • Ինքնուրույն աշխատանքը՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:
<p>Գրականություն</p>	<p><i>Պարտադիր</i> Ժենյա Քալանթարյան, Անդրադարձներ Ժենյա Քալանթարյան, Ուրվագծեր արդի հայ գրականության Ժենյա Քալանթարյան, Գրական հորիզոններ Վազգեն Գաբրիելյան, Գրականության մեր ժամանակը Մելս Սանթրոյան, Պոեզիայի ուղեծրում Զավեն Ավետիսյան, Նորագույն գրականության զարգացման միտումները, Ալվարո Բեքմեզյան, Միֆակիրառության բնույթը արդի հայ արձակում Վաչե Եփրեմյան, 20-րդ դարի հայ գրականություն Մշակութաբանական ենթատեքստեր Վ. Փիլոյան, Ժամանակ և գրականություն Վ. Փիլոյան, Ակնարկներ արդի հայ գրականության <i>Լրացուցիչ</i> Վ. Փիլոյան, Ժամանակի ձայները Սիրանուշ Մարգարյան, Գրական գույզահեռներ</p>

<p>Դասընթացի թվանիշը, անվանումը</p>	<p>ՀԼԳ/մ-020 «ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ»</p>			
<p>Դասընթացին հատկացվող կրեդիտը</p>	<p>3 կրեդիտ</p>			
<p>Ուսումնառության տարի / կիսամյակ</p>	<p>1-ին տարի, 1-ին կիսամյակ</p>			
<p>Ժամերի բաշխումը</p>	<p>Լսարանային</p>	<p>36</p>	<p>Դասախոսություն</p>	<p>20</p>
	<p>Ինքնուրույն</p>	<p>54</p>	<p>Գործնական աշխատանք</p>	<p>16</p>
	<p>Ընդամենը</p>	<p>90</p>		
<p>Ստուգման ձևը</p>	<p>Ստուգաք</p>			
<p>Դասընթացի նպատակը</p>	<p>Ուսանողներին տալ մասնագիտական գիտելիքներ 5-18-րդ դարերի հայ գրականության տեսության մասին՝ ամբողջացնելով պատկերացումը հայ գրականության տեսության մասին և ընդլայնելով գրականագիտական իմացության տիրույթը:</p>			
<p>Դասընթացի վերջնարդյունքները</p>	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. <i>Գիտելիք</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ Իմանա 5-18-րդ դարերի հայ գրականության ժանրային համակարգը և նրա զարգացման 			

	<p>միտումները,</p> <ul style="list-style-type: none"> ▪ հասկանա հայ հին և միջնադարյան գրականության էությունը: <p><i>Հմտություն</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ Բնութագրի 5-18-րդ դարերի հայ գրականության ժանրերը: <p><i>Կարողունակություն</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ Կարողանա ինքնուրույն վերլուծել ստեղծագործությունները, ▪ կարողանա համեմատել հայ և համաշխարհային գրականության համակարգում հայ հին և միջնադարյան գրականության զարգացման ընդհանուր միտումները, ▪ կարողանա որոշ գիտական հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն եզրահանգումներ:
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p><i>Թեմա 1.</i> Հայ հին և միջնադարյան գրականության սեռերը</p> <p><i>Թեմա 2.</i> Հայ հին և միջնադարյան գրականության ժանրերը</p> <p><i>Թեմա 3.</i> Սրբախոսության ժանրը</p> <p><i>Թեմա 4.</i> Պատմական արձակի ժանրը</p> <p><i>Թեմա 5.</i> Փիլիսոփայական արձակի ժանրը</p> <p><i>Թեմա 6.</i> Հոգևոր երգի ժանրը</p> <p><i>Թեմա 7.</i> Ողբի ժանրը</p> <p><i>Թեմա 8.</i> Տաղի ժանրը</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Բանավոր հարցում, թեստային աշխատանք, բնագրային վերլուծություն, ինքնուրույն աշխատանքի ստուգում:</p> <ul style="list-style-type: none"> • Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական աշխատանքների, ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների միջոցով: • Գործնական աշխատանքներ՝ նվազագույնը երկու ստուգում՝ 20-ական միավոր գնահատմամբ: • Ինքնուրույն աշխատանք՝ երկու ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ
<p>Գրականություն</p>	<p><i>Պարտադիր՝</i></p> <p>«Հայ միջնադարյան գրականության ժանրեր»</p> <p>Պ. Խաչատրյանի, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԷ դդ.)</p> <p>Հ. Հովհաննիսյան, «Թատրոնը միջնադարյան Հայաստանում»</p> <p>Հ. Հովհաննիսյան, «Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը»</p> <p>Վանո Եղիազարյան, Հովհաննես Թլկուրանցու կյանքը և ստեղծագործությունը</p> <p>Վանո Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր</p>

	<p>Վանո Եղիազարյան, Ակնարկներ նախամաշտոցյան հայոց գրականության Սիմոնյան Հասմիկ, Հայ միջնադարյան կաֆաներ Մ. Աբեղյան, Երկեր, հ Գ Սրբուհի Հայրապետյան, Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն</p> <p><i>Լրացուցիչ՝</i> «Գանձարան հայ հին բանաստեղծության», աշխ. Պ. Խաչատրյանի «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեատոմատիա», աշխ. Ա. Մադոյանի և Գ. Անանյանի</p>
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԳ/մ-041 «Հայ արձակի փոքր ժանրերի զարգացման տեսության հարցեր»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	48	Դասախոսություն	22
			Գործնական աշխատանք	26
	Ինքնուրույն	72		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Քննություն			
Դասընթացի նպատակը	Ուսանողների գրականագիտական գիտելիքների խորացում, վերլուծական կարողությունների զարգացում, ժանրագրագիտական օրինակափոխությունների վերհանում, ժանրաստեղծ տարրերի չափանիշների ընկալում, երկերի ստրուկտուրալ վերլուծություն, պոետիկայի խնդիրների, առանձնահատկությունների քննում (տարբեր դարաշրջանների գեղարվեստական նյութի վրա):			
Դասընթացի վերջնադրույնները	<p>Պետք է իմանա.</p> <p>Դասընթացի ուսումնասիրությունից հետո պետք է խոր գիտելիք ունենա սեռի, ժանրի, երկի կառուցվածքի, կառուցվածքային բաղադրամասերի, ժանրագոյացման, ժանրաստեղծման գործընթացի կրած փոփոխությունների, կանոնիկ և ոչ կանոնիկ ժանրերի մասին::</p> <p>Պետք է կարողանա</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել գրականագիտության մեջ դեռևս ժանրային վերլուծության չենթարկված ժամանակակից գրական երկերը, • ճանաչել երկի ժանրային առանձնահատկությունները, • խորությամբ ընկալել երկի՝ որպես իրականության արտացոլման, գաղափարի մարմնավորման 			

	<p>հարցերը,</p> <ul style="list-style-type: none"> • նախապատրաստվել հետազոտական աշխատանքի (այդ թվում՝ կուրսային, մագիստրոսական թեզի): <p>Պետք է տիրապետի գեղարվեստական երկի վերլուծության մեթոդներին:</p>
<p>Դասընթացի բովանդակությունը</p>	<p>Թեմա 1. Մեռև ժանր:</p> <p>Թեմա 2. Ժանրային մտածողության ակունքները հայ պատմության մեջ:</p> <p>Թեմա 3. Ժանրային մտածողության զարգացումը միջնադարում:</p> <p>Թեմա 4. Կանոնիկ ժանրեր: Նովելը որպես կանոնիկ ժանր: Նովելի զարգացումը հայ գրականության մեջ:</p> <p>Թեմա 5. Ոչ կանոնիկ ժանրեր: Պատմվածք:</p> <p>Թեմա 6. Վիպակ:</p> <p>Թեմա 7. Վիպական մտածողությունը փոքր ժանրերում:</p> <p>Թեմա 8. Մանրապատում:</p> <p>Թեմա 9. Ակնարկային գրականություն:</p>
<p>Գնահատման մեթոդները և չափանիշները</p>	<p>Հարցատոմսերը, տարբերակները կազմվում են 3 հարցով՝ հետևյալ կառուցվածքով.</p> <ol style="list-style-type: none"> 1. Տեսական հարց 2. Տեսական հարց 3. Գրական երկ <p>1-ին և 2-րդ հարցերը գնահատվում են 6-ական միավոր, որի մեջ երկու միավորը տրվում է ինքնուրույնությանը: Երրորդ հարցը գրական երկ է (նովել, պատմվածք, վիպակ, ակնարկ): Ուսանողը պետք է հիմնավորի, թե ինչու է տվյալ երկը համարվում նովել, պատմվածք, վիպակ, պրոբլեմային կամ այլ տեսակի ակնարկ: Հարցը գնահատվում է 8 միավոր:</p>
<p>Գրականություն</p>	<ol style="list-style-type: none"> 1. Ջրբաշյան Էդ., Պոետիկայի հարցեր: Երևան, «Հայաստան», 1976: 2. Ջրբաշյան Էդ. Գրականության տեսություն: Երևան, 1972: 3. Ավդալբեգյան Մ. Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը: Երևան, 1971: 4. Ռընե Ուելլեք, Օսթին Ուորրեն: Գրականության տեսություն: Երևան 2008: 5. Сборник. Теория литературы, в двух томах, Том 1, под редакцией Н.Д. Тамарченко. Москва, 2014г. 6. Сборник. Теория литературных жанров, в двух томах, Том 2, под редакцией Н. Д. Тамарченко. Москва, 2011г. 7. Քալանթարյան Ժ.: Ժանրերը սովետահայ

	<p>գրականության ձևավորման շրջանում: Երևան, 1974:</p> <p>8. Գրական ստեղծագործություն. Հոդվածների ժողովածու: Վերլուծության ուղիները և սկզբունքները: Երևան, 1983:</p> <p>9. Հոդվածների ժողովածու: Գրական ժանրեր: Երևան, 1985:</p> <p>10. Ա. Նիկողոսյան: Առաքել Դավրիժեցու պատմությունն իբրև գրական երկ: Երևան, 2012:</p> <p>11. Մ. Ավդալբեկյան: Հայ միջնադարյան գրականության ժանրեր: Երևան,</p> <p>12. Ա. Եղիազարյան: Գեղարվեստական պատում: Երևան</p>
--	--

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-014 «Նախագրային հայերեն»			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ կուրս, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	12
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է մասնագիտական հիմնարար գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա ուսուցչին, գիտնական-հետազոտողին տեսական և գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	<p><u>Առարկայի ուսուցման վերջնարդյունքը</u></p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է իմանա.</u></p> <p>Նախագրային հայերենի կառուցվածքային օրինաչափությունները, ձևավորման ու զարգացման մեխանիզմը, հայոց լեզվի զարգացման շրջանները, դրանց հնչյունական, բառապաշարային և քերականական առանձնահատկությունները:</p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է կարողանա.</u></p> <p>Քննադատական և ինքնաքննադատական վերլուծություններ կատարել հայերենի տարբեր շրջանների վերաբերյալ: Բնութագրել նախագրային հայերենի կառուցվածքային առանձնահատկությունները և քերականական իմաստները, դրանց արտահայտության ձևերի տարբերությունների պատճառները:</p> <p><u>Առարկայի ուսուցման արդյունքում ուսանողը պետք է տիրապետի.</u></p> <p>Հին լեզուներ ուսումնասիրելու, համեմատելու մեթոդաբանությանը, հնդեվրոպաբանությանը:</p>			
Դասընթացի բովանդակությունը	<p><i>Թեմա 1</i> Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հնդեվրոպական նախալեզվի հնչյունական համակարգը:</p> <p><i>Թեմա 2</i> Վաղնջահայերենի հնչյունական համակարգը:</p>			

	<p><i>Թեմա 3</i> Հնագույն հայերենի հնչյունական համակարգը</p> <p><i>Թեմա 4</i> Հնդեվրոպական նախալեզվի բառապաշարը:</p> <p><i>Թեմա 5</i> Վաղնջահայերենի բառապաշարը, բառակազմական միջոցները:</p> <p><i>Թեմա 6</i> Հնագույն հայերենի բառապաշարը, բառակազմական միջոցները:</p> <p><i>Թեմա 7</i> Հնդեվրոպական նախալեզվի քերականական առանձնահատկությունները:</p> <p><i>Թեմա 8</i> Վաղնջահայերենի քերականական առանձնահատկությունները:</p> <p><i>Թեմա 9</i> Հնագույն հայերենի քերականական առանձնահատկությունները:</p>
Գնահատման մեթոդները և չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Տեսական գիտելիքները ստուգվում են գործնական աշխատանքների, ընթացիկ ստուգումների և ինքնուրույն աշխատանքների միջոցով: • Գործնական աշխատանքներ՝ երկու ստուգում՝ 20-ական միավոր գնահատմամբ: Ինքնուրույն աշխատանք՝ երկու ստուգում՝ 10-ական միավոր գնահատմամբ
Գրականություն	<p>Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն (Նախագրային ժամանակաշրջան)</p> <p>Հր.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6</p> <p>Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.1-2</p> <p>Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4</p> <p>Հ.Մուրադյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.1</p>

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/մ-013 «ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՄԱԿԱՐԴԱԿԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՐԳԵՐ» /կամընտրական դասընթաց/			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	2 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	I տարի, II կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	24	Դասախոսություն	12
			Գործնական աշխատանք	12
	Ինքնուրույն	36		
	Ընդամենը	60		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	Գիտակարգի նպատակն է՝ 1) ցույց տալ, որ լեզվաբանության ներսում կան ստորակարգային մակարդակների վրա հիմնված համամակարդակային գիտակարգեր, 2) բնորոշել հիմքի և շարույթի եությունը, պարզել նրանց բնույթը, տեսակները, 3) ծանոթացնել հիմքագիտական և շարութաբանական հետազոտության մեթոդներին,			

	այդ մեթոդներով պարզել առաջադրվող հիմքերը և շարույթները:
Դասընթացի վերջնարդյունքները	<p>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Գիտելիք – դասընթացի վերջում ուսանողը ձեռք է բերում լեզվական իրականությունների մակարդակային և համամակարդակային միավորների լիարժեք պատկերացում, լեզվական և արտալեզվական միավորների համարնությունականության իմացություն՝ պայմանավորված համասեռության սկզբունքով</i></p> <p><i>Հմտություն – դասընթացի վերջում ձեռք է բերում լեզվական միավորները տրամախոսաբար միմյանց և արտքաին իրականությանը հակադրելու և նույնացնելու հմտություն</i></p> <p><i>Կարողունակություն – դասընթացի վերջում ուսանողը էլնում է տարբեր համակարգերի միասնականության սկզբունքից, զատում և համատեղում է տարբերությունների նույնացման և նույնությունների տարբերակման մեկնակետերը</i></p>
